

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆԻ ԵՎ ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍ-
ԳՐՔԻ 426.7 ՆՈՂՎԱԾԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒ-
ԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԵՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԵԿ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ**

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Նամաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 31 հոդվածի 5-րդ մասի՝ «Քաղաքացիներ Արտակ Զեյնալյանի եւ Վարդան Խաչատրյանի դիմումների հիման վրա՝ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 426.7 հոդվածի՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» մեկ միասնական գործն ընդունել քննության:

2. Նամաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 31 հոդվածի 5-րդ մասի՝ գործի դատաքննությունն սկսել 2009 թվականի հունիսի 30-ին, ժամը 11.00-ին:

3. Նամաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 31 հոդվածի 5-րդ մասի՝ գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Ն. Նազարյանին:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 6-րդ մասի հիման վրա գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով:

5. Նամաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 27 հոդվածի 3-րդ մասի, դիմողների՝ պետական փուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդության հիման վրա դիմողներին ազատել պետական փուրքի վճարումից:

6. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 4-րդ մասի համաձայն սույն գործով որպես պատասխանող կողմ դատաքննությանը ներգրավել ՆՏ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունած մարմնին՝ ՆՏ Ազգային ժողովին:

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՆ**

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ